



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2020



ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱԳՐԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ
ՀԱՄԱԼՍԱՐԴ



ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2020

ԵՐԵՎԱՆ
2021



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 9 ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ
ՏԵՍԱԿԱՆ
- 11 ԱԳՐԱՐԱՅԻՆ 90. ԿԱՐԵՒՈՐ ՀԱՆԳՐԿԱՆ
ԱՌԱՆՅ ՇՔԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ
- 15 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅ
- 27 ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ
- 33 ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ.
ԿԱՌՈՒՑՈՒՄ ԵՆՔ ՄԵՐ ԱՊԱԳԱՆ
- 39 ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- 44 ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ-ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
- 46 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- 50 ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ
ԿՅԱՆՔԻ ԿԿՈՉՎԵՆ 2021Թ.-ԻՆ
- 51 «ՏՈՒՐ ԴԸ ԱՐՑԱԽ»
- 52 ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ, ՈՐ ԱԶԳՈՎԻ
ՊԻՏԻ ԴԻՄԱԿԱՅԵՆՔ
- 54 ՖԻՆԱՆՍՆԵՐ
- 56 ԴՈՆՈՐՆԵՐ ԵՎ ԱԶԱԿԻՑՆԵՐ





ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱԱՀ հոգաբարձուների խորհրդի
Նախագահ

Հարգելի գործընկերներ:

2020 թվականին ամբողջ աշխարհն առերեսվեց կորոնավիրուսի համավարակին, որը շրջադարձային եղավ ինչպես աշխատանքի կապակերպման, ռիսկերի կառավարման, այնպես էլ կայուն տնտեսական համակարգերի ձեւավորման համար: Համանման ճգնաժամերը ի ցույց դրեցին հասարակական կյանքի կապակերպման խոցելի կողմերը եւ տնտեսական ու բիզնեսի կառավարման մոդելների վերանայման անհրաժեշտությունը: Այս համատեքստում առավել ուշագրավ է տեխնոլոգիաների եւ թվային լուծումների կիրառության սրընթաց աճը:

Արդյունաբերական չորրորդ հեղափոխության պայմաններում առավել կարեւորվում են մարդկային կապիտալի վարգացումը եւ Նորարարության խթանումը: Ուստի, մենք գտնվում ենք մեր պատմության կարեւորագույն շրջանում, եւ մարդն է, այլ ոչ թե բնական ռեսուրսների առկայությունը կամ կապիտալի ծավալը, որ թելադրում է տնտեսական եւ հասարակության վարգացման ուղենիշը: Այս պայմաններում մենք պետք է լինենք առավել արագ, ձկուն եւ Նորարար, որպեսզի, օգտագործելով հայ ստեղծագործ միտքը, տաղանդն ու աշխատասիրությունը, կառուցենք տարածաշրջանում օրինակելի պետություն եւ տնտեսություն:

Այսօր գյուղատնտեսության եւ ագրոպարենային համալիրի վարգացումը նույնպես անցնում է վերափոխման շրջան: Նորարարական լուծումների շնորհիվ մենք կարող ենք նվազեցնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը՝ միաժամանակ բարձրացնելով արտադրողականությունը եւ օպտիմալացնելով արտադրական ծախսերը: Ուստի, ոլորտի վարգացումը ոչ միայն տնտեսական, այլեւ աշխարհաքաղաքական համատեքստում ունի անվտանգության ապահովման կարեւոր դերակատարություն:

Կարելի է եւ Համալսարանի կողմից իրականացվող ծրագրերը եւ երիտասարդների շրջանում անցկացվող մրցույթները, որոնք ուղղված են Նորարարության եւ ճշգրիտ գյուղատնտեսության վարգացմանը: Կարելի

Եմ համարում նաեւ Համալսարանում ընթացող ենթակառուցների վարգացման աշխատանքները՝ լաբորատորիաների վերապիւնումը, ջերմատնային տնտեսության եւ Զրային եւ հողային ռեսուրսների կառավարման հետապոտական կենտրոնի արդիականացումը, ագրոթեք ինկուբատորի ստեղծումը եւ մի շարք այլ աշխատանքներ, որոնք իրականացվել են պետական միջոցների ներգրավմամբ եւ գործընկեր կազմակերպությունների աջակցությամբ: Դրանց թվում են Ագրոբիվեստի եւ գյուղի վարգացման կենտրոն (CARD) հիմնադրամը, Կանաչ Արահետ ՀԿ-ն, ԱՄՆ ՄԶԳ-ն, ՄԱԶԾ-ն, ճապոնիայի կառավարությունը եւ այլն:

Մեզ համար կարեւոր էր Համալսարանի հաստատութենական վարգացումը, որը նախատեսում էր նաեւ օպտիմալացման աշխատանքներ եւ նոր ուսումնական ծրագրերի մշակում: Մենք հետեւում ենք գլոբալ փոփոխություններին եւ մշակում ենք ծրագրեր, որոնք նոր հնարավորություններ կընձեռեն ուսանողներին: Նման ծրագրերից է, օրինակ, օրգանական գյուղատնտեսության վարգացման ծրագիրը, ոլորտ, որը դինամիկ կերպով առաջադիմում է վարգացած երկրներում:

Մեր անելիքները դեռ շատ են, ճանապարհն էլ դժվարին է լինելու, սակայն յուրաքանչյուր տարի ուսանողներն իրենք կտեսնեն փոփոխությունները եւ կստանան ավելի որակյալ կրթություն:

Մեր Հայրենիքի համար այս բարդ ժամանակահատվածում մենք ջանք ու եռանդ չենք խնայելու, որ մեր տնտեսության համար կարեւորագույն՝ գյուղատնտեսության եւ ագրոբիվեստի ոլորտը համալրենք որակյալ մասնագետներով:

Վստահ եմ, որ մարդկային կապիտալի վարգացումը եւ նորարարության խթանումը կդառնան ագրոպարենային ոլորտի առանցքային շարժիչ ուժը, որի շնորհիվ Հայաստանը կդառնա օրինակելի ամբողջ տարածաշրջանի համար:



ՎԱՐԴԱՆ ՈՒՌՈՒՏՅԱՆ

ՀԱԱՀ ռեկտոր

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հարգելի գործընկերներ:

Մեր համալսարանի համար 2020 թվականը, համապատասխան է միջազգային լրջագույն մարտահրավերներով հանդերձ, այնուամենայնիվ ձեռքբերումների տարի էր:

Արցախյան երկրորդ պատերազմի եւ կորոնավիրուսային համավարակի բերումով մենք հարկադրված էինք պատշաճ ձեւով չտոնել համալսարանի հիմնադրման 90-ամյա հոբելյանը, ինչպես նաեւ չկատարել տարվա ընթացքում շահագործման հանձնված բազմաթիվ նոր ենթակառուցյունների բացման արարողությունները: Հոբելյանական միջոցառումներից ամենահիշարժանը, նաեւ խորհրդանշականը, «Տուր դը Արցախ» էր:

Նախորդ տարվա շրջադարձային փոփոխությունները հնարավորություն տվեցին 2020 թ.-ին լուրջ առաջընթաց գրանցել ուսումնական պլանների եւ առարկայական ծրագրերի արդիականացման, ուսումնահետապոտական եւ վարձացման առումով կարելի էր անցնել ենթակառուցյունների գործարկման հարցում: Այլ խոսքով, համալսարանն ամրապնդել է իր դիրքը որպես գյուղատնտեսական կրթության, գիտության եւ գիտասփյուռ-խորհրդատվական ոլորտի առաջատար ուժ եւ կադրային բանկ:

Ագրոտեխնոլոգիական կրթության գերազանցության կենտրոնի վերափոխման գործընթացի խորացման առումով կարելի էր նշանակություն ունեցան նորագույն տեխնոլոգիաներով հագեցած այնպիսի ենթակառուցյունների շարք մտնելը, ինչպիսիք են համալսարանական բաց տարածքների ռճով Ագրոտեխնոլոգիաների ինկուբատորը, ընթերցասրահ-քննարկումների սրահը, Ջրային եւ հողային ռեսուրսների հետապոտական կենտրոնը, ֆարմբոտ համակարգով օժտված նորարարական ջերմատունը, որի արտադրանքը հաճույքով ու երախտագիտության վագուումով տրամադրում ենք «Ջինվորի տուն» վերականգնողական կենտրոնում առողջությունը վերականգնող մեր հերոսներին եւ մի շարք այլ կառույցներ:

Նորացման գործընթացը շարունակական է. տեխնոլոգիական ու կրթության բովանդակության մշտական բարելավման առումով հաջորդ տարին նվազագույնը լինելու է 2020 թ.-ի «նմանակը»: Շարք են մտնելու Կենսատեխնոլոգիական ինկուբատորը, Ակունքի եւ Ոսկեհատի տնտեսություններում հիմնվելու են ինտենսիվ այգիներ ու բանջարանոցներ՝ սեփական ոռոգման ջրավազաններով ու կաթիլային ոռոգման համակարգով, կարկտապաշտպան ցանցերով ու սեփական եղանակային կայանքներով, Ագրոճամբարը եւ նորարարական մի շարք այլ ենթակառույցներ: Դրանք, չլուծահեռվելով մրցունակ նոր մասնագիտական կրթական ծրագրերին՝ մեծապես նպաստելու են համալսարանի նոր դեմքի կերտմանը:

Այս պահին կարող ենք հանգիստ խղճով արձանագրել. դրամատիկ վարճացումներով, անորոշության եւ ճգնաժամային վարճացումների համատեքստում 2020 թ.-ին Ագրարային համալսարանը ավելի հստակ ցույց տվեց իր նոր դեմքը եւ նոր, անշփոթելի ձեռագիրը երկրի եւ միջազգային կրթական տարածքում եւ ագրոպարենային համակարգի վարճացման համար պատասխանատու առաջատար կառույցների շարքում:

Ագրարային ուսանողության, բոլոր կրթագիտական ստորաբաժանումների աշխատակազմերի ոգեւորությունը, պատասխանատվության վզացումը եւ փոփոխությունների մաս կազմելու պատրաստակամությունը, ղեկավարության հետ լիարժեք փոխհասկացողությունն ու փոխվստահությունը, ինչպես նաեւ հոգաբարձուների խորհրդի գնահատելի աջակցությունը մեզ վստահություն են տալիս մնալու բարեփոխումների առաջնագծում եւ լավագույն օրինակը լինելու այլոց համար:



ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Մեր առաքելությունն է՝ ոլորտի շահակիցների հետ համագործակցությամբ պատրաստել մասնագիտական հմտություններով, երկրի ագրոպարենային համակարգը վարճացնելու ունակ ագրոտեխնոլոգիական ուղղվածությամբ մասնագետներ:

Համալսարանը խթանելու է իր գիտական ներուժը՝ առաջարկելով առաջընթացի լավագույն լուծումներ, ներդնելու է արդիական տեխնոլոգիաներ՝ օգտագործելով եւ ցուցադրելով գիտելիքահենք տնտեսության արդյունքները:



ՏԵՍԱԿԱՆ

Համալսարանի տեսլականն է՝ դառնալ ստեղծարարությամբ և նորարարություններով առաջնորդվող ագրոտեխնոլոգիական ուսումնագիտական գերազանցության կենտրոն՝ խթանելով գյուղատնտեսական կրթության, գիտության, խորհրդատվության և արտադրության ներդաշնակ փոխգործակցությունը:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

90



ԿԱՐԵՒՐ ՀԱՆԳՐՎԱՆ՝ ԱՌԱՆՑ ՇՔԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համար 2020 թվականը հոբելյանական էր. լրացավ համալսարանի հիմնադրման 90 տարին:

1930-ին մայր բուհից պատվեցին գյուղատնտեսական եւ բժշկական ինստիտուտները՝ իբրեւ առանձնահատուկ եւ խիստ կարեւոր ոլորտների համար մասնագետներ կերտող, Հայաստանում զուգահեռը չունեցող հաստատություններ:

90 տարի մենք մնում ենք եպակի՝ մեր առաքելությամբ, բնույթով, փիլիսոփայությամբ, կրթության կազմակերպման անշփոթելի դիմագծով-ձեռագրով: Միակը: Եւ այս հանգամանքը ինքնասիրությունը շոյելուց վատ, ավելի շատ պարտավորեցնող է:

90 տարի շարունակ ագրարային ընդգրկուն, բազմաբնույթ ոլորտի համար մենք կոփել ենք պատկառելի փաղանգ, գյուղի-հողի հոգսը հասկացող-կիսող-ականջալուր, մշակին միայնակ չթողնող մասնագետների փառահեղ զորախումբ:

Քաղաքական, պետական գործիչներ, դոկտոր-պրոֆեսորներ, իրենց գործին գիշեր ու զօր պարզապես աննկատ ու անմնացորդ նվիրված մասնագետներից մինչեւ մշակութաբաններ, արվեստագետներ ու բանաստեղծներ. նրանք են այսօր մեր ինը տասնամյակի հետեւողական, սիրով առլեցուն աշխատանքի վկաները եւ առհավատչյան, որ հրաշալի ավանդույթներ ունեցող այս բուհի ապագան ավելի ազդեցիկ է լինելու՝ ժամանակին համաքայլ-համահունչ, աշխարհի համար միանգամայն հասկանալի-ընդունելի: Վկան մեր համագործակցության նոր հասցեներն են, արտերկրի համալսարանները, որոնք մեզ ընկալում են որպես վստահելի, ամուր, արժանի գործընկեր:

Հոբելյանի առթիվ նախատեսված էր հանդիսությունների, բազմաբնույթ միջոցառումների ծրագիր, որը, ցավոք, անհնար եղավ իրագործել համավարակի պատճառով: Բայց տոնի զգացողությունը կա, կան արվածն արժեւորելու ու նոր նշաձողեր սահմանել-հաղթահարելու վճռակալությունն ու ներուժը: Դա նշանակում է, որ մեկդարյա հոբելյանին ընդհուպ մոտեցող համալսարանը շարունակելու է լինել ՀՀ բուհական միջավայրում առաջին-լավագույններից մեկը՝ իր ուրույն տեղն անպահովելով արդիական տեխնոլոգիաներ ու թվային առաջընթաց որդեգրած համալսարանների «քարտեպի» վրա:



2020-2024 թթ. Ռազմավարական ծրագրում ՀԱԱՀ-ն, ստանձնելով նոր առաքելություն եւ տեսլական, խնդիր դրեց իր գործունեությամբ ոչ միայն աջակից դառնալ ազգային առաջնահերթությունների իրագործմանը, այլև, հանուն մարդկության բարեկեցիկ կյանքի, ներդրում ունենալ ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների իրագործմանը: Համալսարանը, որդեգրելով կայուն զարգացման 17 նպատակներից 10-ը եւ, համախմբելով իր թիմի ջանքերը, ձգտելու է.



Նպաստել ՀՀ սննդի անվտանգության կայուն մեխանիզմների պահպանմանը եւ զարգացմանը՝ համագործակցելով բոլոր հնարավոր շահակիցների հետ:



Նվազեցնել վտանգավոր քիմիական նյութերի, օդի, ջրի եւ հողի աղտոտման ու թունավորման հետեւանքով մահերը եւ հիվանդությունները:



Ապահովել որակյալ կրթություն:



Նպաստել ՀՀ ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման եւ գիտագործնական խնդիրների լուծմանը:



Խթանել էներգիայի աղբյուրների օգտագործումը եւ նպաստել կլիմայի փոփոխության, էներգիայի հասանելիության խնդիրների լուծմանը:



Ապահովել մասնագիտական ներուժ, որն ի պորու է աջակցել քաղաքային, մերձքաղաքային միջավայրում ուղղահայաց գյուղատնտեսության հիմնմանը, վարմանն ու զարգացմանը:



Ենթակառույցների բարեկարգման միջոցով ռեսուրսները օգտագործել պատասխանատու մոտեցմամբ:



Իրականացնել հետապոտություններ՝ ուղղված երկրում բնապահպանական վիճակի ուսումնասիրմանն ու գնահատմանը, ինչպես նաև տեխնաձին պատճառներով աղտոտված հողատարածքներից անվտանգ սննդամթերքի ստացման նպատակով տեխնոլոգիաների մշակմանը:



Մշակել եւ ներդնել ժամանակակից տեխնոլոգիաներ ջրային եւ հողային ռեսուրսների կառավարման ոլորտում: Հիմնել կենսատեխնոլոգիական եւ ագրոտեխնոլոգիական ստարտափ ինկուբատորներ եւ նպաստել կայուն վարձագման նպատակներին ուղղված նորարարական գաղափարների իրագործմանը:



Իրականացնել հետապոտություններ՝ ուղղված ցամաքային էկոհամակարգերի կայուն օգտագործմանը, աջակցել եւ մասնակցել անտառվերականգնմանը, պահպանել կենսաբազմազանությունը:



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅ






ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑ

2020 թ.-ին COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների պատճառով ՀԱԱՀ-ում եւ մասնաճյուղերում ուսումնական գործընթացի արագ վերակազմակերպման խնդիր դրվեց. կիրառվեցին ուսուցման եւ հիբրիդային, եւ առկա, եւ հեռավար մոդելները:


Բուհի՝ առցանց տիրույթում դասագործընթացի ինտեգրումն իրականացվեց սահուն, քանի որ համապատասխան ստորաբաժանումներում հեռավար ուսուցման գործիքակազմին տիրապետելու համար իրականացվեցին առցանց վերապատրաստումներ, մշակվեցին հեռավար ուսուցման մեթոդաբանական ուղեցույցներ, ընդլայնվեցին ուսումնական

գործընթացի էլեկտրոնային կառավարման e-Buh համակարգի եւ էլեկտրոնային ուսուցման Moodle հարթակի օգտագործման ծավալներն ու կիրառման հնարավորությունները:





Թեստային համակարգն արդարացված է. արձանագրում են ուսանողներն ու դասախոսները



Առաջին եւ երկրորդ կուրսերի գրեթե բոլոր առարկաների քննություններն անցկացվել են Տվյալագիտության ամբիոնի գնահատման եւ թեստավորման կենտրոնի համակարգչային լսարաններում, որը գոհացնում է թե՛ դասախոսներին, թե՛ ուսանողներին: Կենտրոնում ստեղծված են բոլոր պայմանները անաչառ քննություն անցկացնելու համար. քննասենյակ կարող են մտնել եւ քննության ընթացքին հետեւել միայն ոչ մասնագետներ, ինչպես նաեւ ՏՏ բաժնի աշխատակիցներ՝ առաջացած տեխնիկական խնդիրներին լուծում տալու համար: Քննասենյակում հայտնվելուց առաջ ուսանողը համակարգչի միջոցով ընտրում է առարկան, վերցնում կտրոնը, որի համարը ցույց է տալիս, թե որ համակարգչից պետք է օգտվի: Արդեն քննասենյակում ուսանողը մուտքագրում է նույնականացման ծածկագիրը, համակարգչի էկրանին հայտնվում են տվյալ ուսանողի նկարը եւ հարցաշարը, իսկ քննության ամբողջ ընթացքին հնարավոր է հետեւել նախասրահում տեղադրված մոնիտորի միջոցով:

Կրթական նոր ծրագրեր

2020 թ.-ին համալսարանում մեկնարկեցին մի շարք մագիստրոսական կրթական ծրագրեր, որոնց ստեղծման հրամայականը աշխատաշուկայում ժամանակակից գիտելիքներով ու հմտություններով պինված մասնագետների կարիքն է:



ABIONET նախագծի շրջանակում մեկնարկեց **«Սննդամթերքի անվտանգություն»** մագիստրոսական կրթական ծրագիրը, որը մեր մասնագետները նախապատրաստում էին երկու տարի շարունակ, էրազմուս +-ի շրջանակում:

Ծրագիրը ներառում է 12 պարտադիր (մասնագիտական անգլերեն, սննդի քիմիա, կենսավիճակագրություն եւ տվյալների վերլուծություն, սննդամթերքի իրավունք, սննդի բարձրագույն մանրէաբանություն, թունաբանություն եւ ալերգոլոգիա, ռիսկերի վերլուծություն եւ այլն) եւ 5 կամընտրային (սննդածին հիվանդություններ, սննդի կեղծում եւ կանխարգելում, ագրոբիոսեֆի կառավարում, նախագծերի կառավարում եւ այլն) մոդուլ:



Ծրագրի շրջանակում ստեղծված սննդամթերքի որակի հսկման՝ նորագույն սարքավորումներով հագեցած ուսումնական լաբորատորիան ծառայելու է ուսանողներին գործնական մասնագիտական գիտելիքներ եւ հմտություններ հաղորդելու նպատակին եւ կնպաստի սննդամթերքի որակի հսկման ոլորտի համար նորագույն գիտելիքների ու կիրառական հմտությունների տիրապետող մասնագետների թողարկմանը:

Մագիստրանտներից լավագույնները, որոնք գերազանց կտիրապետեն անգլերենին, հնարավորություն կունենան թեպերի շրջանակում հետապոտական լաբորատոր աշխատանքներն իրականացնել արտասահմանյան գործընկեր համալսարաններում:

2020 թ. սեպտեմբերին մեկնարկեց երկրում եւ տարածաշրջանում իր տեսակի մեջ եվակի «**Օրգանական գյուղատնտեսություն**» մագիստրոսական ծրագիրը, որը ՀԱԱՀ-ի եւ Վիեննայի Բնական ռեսուրսների եւ բնական գիտությունների համալսարանի (BOKU) համատեղ իրականացրած «Խթանել օրգանական գյուղատնտեսությունը Հայաստանում» նախագծի մնայուն արդյունքն է:



Ծրագրի հաջողության համար առկա են բոլոր նպաստավոր պայմանները՝ ոլորտի մասնագետների հարաճուն պահանջարկ, շահակիցների (այդ թվում՝ օրգանական մթերք արտադրողների) լայն հանրության ակտիվ մասնակցությամբ մշակված ուսումնական պլան եւ առարկայական ծրագրեր, համապատասխան վերապատրաստումներ անցած եւ արդիական գիտելիքներով լինված դասախոսական թիմ, գործող եւ ստեղծման փուլում գտնվող ուսումնահետապոտական ենթակառուցվածքներ: Նախագծի շրջանակում ՀԱԱՀ-ում հիմնված Օրգանական գյուղատնտեսության լաբորատորիայում իրականացվում են հողի, բույսի եւ ջրի հետապոտություններ՝ նորագույն սարքավորումներով ու մեթոդներով:

Մագիստրանտների գործնական կրթության եւ փորձուսուցման համար նպատակայնորեն կօգտագործվի համալսարանի՝ Ակունք համայնքում գտնվող, ավելի քան 6 հեկտար տարածք զբաղեցնող Օրգանական գյուղատնտեսության ուսումնափորձնական կենտրոնը:

Երկրի պարենային անվտանգության մարտահրավերին դիմակայելու առումով կարևոր նշանակություն կունենա նաեւ Ագրարային համալսարանում ներդրված **Կայուն գյուղատնտեսության մագիստրոսական ծրագիրը**:

Ծրագրի նպատակն է որակավորել մասնագետների, որոնք պատրաստ են գտնել նորարարական եւ ներառական լուծումներ գյուղատնտեսությունն ավելի հարակայուն դարձնելու եւ այդպիսով պարենային անվտանգության, կլիմայական փոփոխությունների եւ համանման արդիական մարտահրավերների հաղթահարման համար: Թեմատիկ հետապոտություններին զուգահեռ մասնակիցները ներգրավվում են համալսարանի գործընկերների նախագծերում՝ ձեռք բերած գիտելիքն իրական փորձով համալրելու համար:

Ծրագիրը ստեղծվել է միջազգային առաջատար 10 համալսարանների համանման կրթական ծրագրերի համեմատական վերլուծության հիման վրա:

«Կայուն գյուղատնտեսություն» մագիստրոսական ծրագրի կառուցվածքը

7 հիմնական թեմատիկ խմբեր (ԹԵԽ)

ԹԵԽ-1. Կայուն ագրոէկոհամակարգեր

ԹԵԽ-2. Բնական ռեսուրսների կայուն կառավարում եւ կլիմա

ԹԵԽ-7. Շրջանաձեւ տնտեսություն եւ գիտելիքահեռք գյուղատնտեսություն

ԹԵԽ-8. Ներառական արժեչղթաներ եւ տարածքային կայուն ինստիտուտներ



ԹԵԽ-3. Գյուղական սոցիոլոգիա, ներառականություն եւ կայուն զարգացում

ԹԵԽ-4. Կայուն ագրոպարենային համակարգեր

ԹԵԽ-6. Ագրոսոցիոլոգիա

2 լրացուցիչ ԹԵԽ-եր

ԹԵԽ-5. Գյուղատնտեսական հետապոտությունների հիմունքներ

ԹԵԽ-9. Գյուղատնտեսական նորարարական եւ խորհրդատվական համակարգեր: Թվայնացում



Ծրագրի հիմնական բաղադրիչն է մագիստրոսական թեզը, որի թեման ընտրվելու է՝ հարակայուն գյուղատնտեսության կոնկրետ խնդիր լուծելու նկատառումից ելնելով: Ծրագիրը բաղկացած է կայուն գյուղատնտեսությանն առնչվող 7 հիմնական թեմաների խմբերից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացվելու է որպես սեմինարների, դասախոսությունների ու վերապատրաստումների առանձին շարք: Հիմնական թեմաները համապատասխանում են կայուն վարգացման երեք ուղղություններին՝ առողջ շրջակա միջավայր, կայուն տնտեսական աճ, սոցիալական համերաշխություն: Շրջակա միջավայրին վերաբերող թեմատիկ խմբերի ուսումնական ծրագրերը կապվում են իրագործվում են «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպության, իսկ սոցիալական համերաշխությանը վերաբերող թեմատիկ խմբերինը՝ Երեւանի պետական համալսարանի Սոցիոլոգիայի ամբիոնի եւ Գերմանական Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի աջակցությամբ:

Գյուղատնտեսության վարգացման, մրցունակության եւ արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է ավանդականից անցում կատարել դեպի նորարարական տեխնոլոգիաներ, եւ այս գործընթացում իր դերակատարությունն է ունենալու նորացված Ագրարային ճարտարագիտություն մասնագիտությունը՝ **Մեքենասարքավորումների ճարտարագիտություն, Հողային եւ ջրային ռեսուրսների ճարտարագիտություն, Ագրոարդյունաբերության տեխնոլոգիաներ, Ճշգրիտ գյուղատնտեսություն** մագիստրոսական կրթական ծրագրերով:

Ճշգրիտ գյուղատնտեսություն մագիստրոսական ծրագիրը

մշակվելու է ՀԱԱՀ-ի եւ ԵՄ կողմից ֆինանսավորվող եւ Ավստրիական վարճացման գործակալության կողմից համաֆինանսավորվող Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն (EU-GAIA) նախագծի միջեւ ստորագրված հուշագրի շրջանակում, համաձայն որի ներդրվելու են նորագույն տեխնոլոգիաներ, այդ թվում՝ գյուղատնտեսական անօդաչու թռչող սարքեր:

Ագրարային ճարտարագետները տեխնոլոգիաները ինտեգրելու են գյուղատնտեսության հետ՝ նախագծելով նոր եւ կատարելագործված սարքավորումներ, որոնք կարող են ավելի արդյունավետ աշխատել կամ կատարել նոր առաջադրանքներ: Հայաստանում ագրոպարենային ոլորտի տեխնոլոգիական վարճացումներում մեծ կարեւորություն ունի խելացի գյուղատնտեսության նոր տեխնոլոգիաների ներդրումը, որը համահունչ է համալսարանի վարճացման տեսլականին, որի միջնաժամկետ ռազմավարության առանցքային դրույթն է համալսարանի վերակազմավորումը «ագրարայինից» «ագրոտեխնոլոգիականի»:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ





Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն

2020 թ.-ին լրացավ **Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի** (ԱՌԻԿ)՝ ՀԱԱՀ-ի և Տեխասի A&M համալսարանի միջև համատեղ կրթական ծրագրի, հիմնադրման 20-ամյակը: ԱՌԻԿ-ը արեւմտյան ոճի դասավանդման և ուսումնառության սկզբունքների ու հայաստանյան միջավայրի եզակի ու հաջողված սինթեզ է: Բակալավրիատի երկամյա և Ագրոբիզնեսի մագիստրատուրայի (MAB) 18-ամյա ծրագրերը կապվել են Տեխասի A&M համալսարանի գյուղատնտեսագիտության համապատասխան ծրագրի հիման վրա: Առանցքային առարկայական ուղղվածություններն են կառավարումը, շուկայաբանությունը և ֆինանսները: 2010 թ.-ին հիմնված MAB-ն ագրոբիզնեսի տնտեսագիտության ոլորտում անգլալեզու մագիստրոսական միակ ծրագիրն է տարածաշրջանում:




Այս տարիների ընթացքում ԱՌԻԿ-ն ունեցել է տնտեսագիտության, շուկայաբանության և կառավարման արդիական հմտություններով, ժամանակակից հաղորդակցական կարողություններով և անգլերենի գերազանց իմացությամբ ավելի քան 600 շրջանավարտ, որոնց շնորհիվ է ՀԱԱՀ դիպլոմ և Տեխասի A&M համալսարանի հավաստագիր: ԱՌԻԿ-ի բոլոր շրջանավարտներն էլ մասնագիտական հաջող կարիերա են կառուցում Հայաստանի և արտերկրի ագրոբիզնեսի ոլորտում, ֆինանսաբանական համակարգում, միջազգային կառույցներում, վերջին տարիներին՝ նաև սեփական բիզնեսներում:




ԱՌԻԿ շրջանավարտներն աշխատաշուկայում

- 16 %**
Կրթություն եւ
հետապոտական
աշխատանք
- 14 %**
ԱՅԼ
- 6 %**
Ձեռներեցներ
- 30 %**
Ագրոբիզնես
- 34 %**
Ֆինանսական
հաստատություններ



ԱՌԻԿ աշխատող շրջանավարտների **23 %**-ից ավելին կբաղեցնում է ղեկավար պաշտոններ



Շրջանավարտների **95 %**-ը
աշխատանք է գտնում
բուհն ավարտելուց հետո **1-3** ամսվա
ընթացքում

ՀԱԱՀ ուսանողուհին Վայիենշտեֆանի համալսարանում դասավանդում է իր հասակակիցներին


2020 թ. դեկտեմբերի դրությամբ Գերմանիայի Վայիենշտեֆան-Թրիսդորֆի կիրառական գիտությունների համալսարանի եւ ՀԱԱՀ-ի միջեւ գործակցության



շրջանակում այդ համալսարանում իրենց ուսումն էին շարունակում ՀԱԱՀ-ի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի 12 ուսանող, որոնք աչքի էին ընկնում բարձր առաջադիմությամբ:

Սվետլանա Ավագյանը, լինելով Վայիենշտեֆանի համալսարանի «Ագրարային մենեջմենթ» միջազգային մագիստրոսական ծրագրի իրենց կուրսի լավագույն ուսանող, այդ հաստատությունում ընդունվել է աշխատանքի որպես ասիստենտ, ինչպես նաեւ նշանակվել դասընթացավար:

Սվետլանան վերոնշյալ կրթական ծրագրի հայ ուսանողներին դասավանդում է Բիվեստ կառավարում եւ Գյուղատնտեսական արտադրության էկոնոմիկա առարկաները:



A pair of hands, one from an older person and one from a younger person, are shown holding a small green sapling with soil. The background is a clear blue sky with a soft gradient. The text is overlaid on the upper part of the image.

ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

«Ֆրուտենիա» մեգանախագիծը թեւակոխել է գործնական փուլ

Ագրոբիզնեսի հետապոտությունների եւ կրթության միջազգային կենտրոնի (ICARE) եւ ՀԱԱՀ համատեղ «Ֆրուտենիա» նախագիծը թեւակոխել է գործնական փուլ: Հայաստանում այգեպտղաբուծության ոլորտի վարգացմանը միտված այս նախագծի կրթական բաղադրիչն ունի ագրոնոմիական ֆակուլտետի առարկաների արդիականացման ու դասավանդման նոր մեթոդների ներդրման նպատակ: Նախագիծը ֆինանսավորում է Ավստրիական վարգացման գործակալությունը:



Ուսումնասիրությամբ վեր են հանվել այգեպտղաբուծության ոլորտի հիմնախնդիրները, կարիքները, վավերացվել են այգեպտղաբուծիկն առաջադրվող պահանջները, մասնագետների պատրաստման՝ Ագրարային համալսարանի առկա ներուժը, կարճաժամկետ դասընթացների անհրաժեշտությունն ու թեմատիկան, դիմորդների հետ աշխատանքի մեթոդաբանությունը եւ հարակից այլ հարցեր:

Ելակետային գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են «Ագրոնոմիա, սելեկցիա եւ գենետիկա» մասնագիտական կրթական





ծրագրի ուսումնական պլանի բարելավմանը, մասնագիտական վերապատրաստման կարճաժամկետ դասընթացների մշակմանը, վերապատրաստողների վարեպատրաստմանը, այգեպտղաբուծության տեղեկատվական կայքի ստեղծմանն առնչվող փաթեթներ:

«Ֆրուտենիա» եռամյա մեգանախագծի շրջանակում ՀԱԱՀ Ոսկեհատ ուսումնափորձական տնտեսությունում 1,5 հեկտար հողատարածության վրա սկսվել են նորագույն տեխնոլոգիաներով հագեցած ինտենսիվ այգու հիմնման աշխատանքները:



Ոսկեհատում հիմնվեց նորարարական փորձացուցադրական տարածք

ՀԱԱՀ-ի ԵՏ Տիերաս դե Արմենիա ընկերության միջև ստորագրված համաձայնագրի հիման վրա աշխատանքներ են իրականացվել Ոսկեհատ համայնքում նորարարական փորձացուցադրական տարածք հիմնելու ուղղությամբ: 2020-ին տարածքում կառուցվել է ոռոգման ջրավապան, ներդրվել է կաթիլային ոռոգման համակարգ ԵՏ իրականացվել վարունգի փորձնական աճեցում: 2021թ.-ին կփորձարկվեն բանջարեղենի այլ տեսակներ, ինչպես նաև կտեղադրվի կարկտապաշտպան ցանց:





Ծրագիրն իրականացվում է Հայաստանում Արգենտինայի դեսպանության աջակցությամբ եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության Բուենոս Այրեսի գրասենյակի ֆինանսավորմամբ: Ուսանողներից բացի, այստեղ ֆերմերները հնարավորություն կունենան ծանոթանալ նորարարական տեխնոլոգիաների արդյունավետությանը, ինչպես նաեւ կստանան գործնական խորհրդատվություն:



Ագրոճամբար



«Նորարարական գյուղատնտեսության վերապատրաստման եւ ուսուցման ճամբար (ԱԳՐԻ ՔԵՄՓ)» ծրագիրը, որն իրականացնում է ICARE հիմնադրամը, մեկնարկել է մայիսի 1-ին: Ծրագրի շրջանակում համալսարանի Աղավնաձորի «Զարթոնք» հանգստյան տան տարածքում նախատեսվում է ստեղծել նորարարական գյուղատնտեսության թեմաներով վերապատրաստման եւ ուսուցման ճամբար (Ագրոճամբար)՝ ուսանողների, երիտասարդ մասնագետների, գյուղատնտեսների կարողությունների վարճացման նպատակով: Ագրոճամբարում կհիմնվեն գործնական ուսուցման ցուցադրական կենտրոններ, այդ թվում՝ պտղատու եւ հատապտղատու փոքր այգիներ, գյուղատնտեսական սարքավորումների կենտրոն, «խելացի» թռչնաբուծարան, որոնք շրջանաձեւ տնտեսության բաղկացուցիչ մաս

են կազմելու: Հանգստյան տան վերանորոգումը, ինչպես նաեւ ցուցադրական կենտրոնների վերակառուցումը իրականացվելու է ԱՄՆ ՄԶԳ-ի եւ ՀԱԱՀ-ի համաֆինանսավորմամբ:



ՀԱԱՀ-ի ԵՎ ՄԱԿ-ի ՊՀԾ համագործակցություն

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հետ գործակցության շրջանակում ՀԱԱՀ-ի մասնագետների ուժերով 2020 թ.-ի 2-րդ եռամսյակում իրականացվել է վերջին տասնամյակում ՀՀ-ում պարենի հեռանկարային արժեզրեաների վերաբերյալ իրականացված հետապոտությունների ուսումնասիրություն և համադրություն: ՀԱԱՀ հետապոտական թիմը ուսումնասիրել է Հայաստանում արտադրվող գյուղատնտեսական հիմնական մթերքները՝ հացահատիկ, հատիկաընդեղեն, բանջարեղեն, մրգեր և հատապտուղներ, միս, կաթ, ձու, մեղվաբուծական մթերքներ և ձկնամթերք: Ուսումնասիրվել են ներառական հարակայուն արժեզրեաների վերաբերյալ հրատարակված նյութերն ու դրանք համադրելով՝ կատարվել են ամփոփ եկրահանգումներ: Հետապոտության թիրախներից մեկն էլ սննդամթերքի կորստի ու վատնման խնդիրների վերհանումն էր:



Ուսումնասիրությունից բխող առաջարկություն-հանձնարարականները ներառում են գյուղմթերքի գնումներ կատարելիս կոոպերատիվ կառույցների արտադրանքին նախապատվությունը տալը, գների կարգավորման նպատակով փորձագետների համապատասխան խմբերի կազմումը, կաթի արտադրության ընդլայնման առկա ներուժին աջակցությունը, գյուղատնտեսության աջակցության և գյուղըլորտում ներդրումներ կատարելու համար դոնոր հանրության ներգրավումը, թիրախային խմբերի համար մասնագիտական վերապատրաստման և խորհրդատվության հնարավորությունների ստեղծումը:

Անտառային լանդշաֆտների վերականգնման հնարավորությունների գնահատման նախագիծ



Համաշխարհային բանկի և ՀԱԱՀ-ի միջեւ գործընկերության պայմանագրի շրջանակում 2020 թվականի սեպտեմբերին մեկնարկել է «Անտառային լանդշաֆտների վերականգնման հնարավորությունները Հայաստանում» ծրագիրը, որի շրջանակում կատարվում է երկու հետազոտություն՝ «(Ագրո) կենսաբազմապատկանության ուսումնասիրություն անտառային լանդշաֆտների վերականգնման համար» և «Մասնավոր սեկտորի ներգրավվածության հնարավորությունների ուսումնասիրություն»:



Գործընթացն իրականացվում է ՀԱԱՀ ռեկտորի համակարգմամբ, Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոնի մասնագետների ուժերով և կավարտվի 2021 թվականի սեպտեմբերին:



ԿԱՌՈՒՅՈՒՄ ԵՆՔ
ՄԵՐ ԱՊԱԳԱՆ

ՀԱԱՀ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Հունիսի 9-ին պաշտոնապես մեկնարկեց ՀԱԱՀ ագրոտեխնոլոգիական արքեթրատորի ծրագիրը, որի նպատակն է աջակցել գյուղատնտեսության ոլորտում նորարարական լուծումներ առաջարկող լավագույն



ստարտափ թիմերին և սկսնակ ձեռներեցներին: Ծրագիրն իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի ImpactAIM արքեթրատորի կողմից՝ ՀԱԱՀ-ի, Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST), ICARE-ի, Nation in Action հարթակի հետ համատեղ և Հայաստանի Կայուն զարգացման

նպատակների ազգային նորարարական կենտրոնի և Ասիական զարգացման բանկի աջակցությամբ:



Սեպտեմբերին բացվեց Ագրոտեխնոլոգիաների ինկուբատորը:

Մինչ այդ արդեն ստարտափների երկու մրցույթ էր անցկացվել: 2020 թ. մրցույթին հայտ էին ներկայացրել 100-ից ավելի անհատ դիմորդ և 26 թիմ, որոնցից 13-ին

հնարավորություն տրվեց ներկայացնել ստարտափ նախագիծը: Հաղթող ճանաչվեցին Agrosoko, Foodhub, Green Star, SmarTerev թիմերը, որոնք էլ բաժանեցին 16 000 եվրո մրցանակային ֆոնդը: Իսկ Նոյեմբերին հայտարարվեց հաջորդ տարվա փետրվարին կայանալիք երրորդ մրցույթի մասին, որի մրցանակային ֆոնդը կկազմի 35 000 եվրո:





Սեպտեմբերի 24-ին բացվեց Ֆարմբոտ ռոբոտային համակարգով համալրված Նորարարական ջերմատունը, որի կառուցումն իրականացվել է ՀՀ-ում ճապոնիայի դեսպանության ֆինանսական աջակցությամբ: Պաշտոնական բացումը կատարեցին ՀՀ-ում ճապոնիայի դեսպան Ջուն Յամադան եւ ՀԱԱՀ ռեկտոր Վարդան Ուռուտյանը:




Նորարարական ջերմատան շահառուները ոչ միայն ուսանողներն են, այլ նաեւ հետապտողներն ու ֆերմերները, իսկ ջերմատան բերքից պարբերաբար բաժին է հանվում «Զինվորի տուն» վերականգնողական կենտրոնում բուժվող մարտիկներին:



Հոկտեմբերին շահագործման հանձնվեց Ջրային և հողային ռեսուրսների կառավարման տեխնոլոգիական հետապոտական կենտրոնը, որը ծառայելու է ուսումնագիտական, հետապոտական, մասնագետների վերապատրաստման, ինչպես նաև ոլորտին փորձագիտական առևտրային ծառայություններ մատուցելու նպատակների:

Համալսարանական բաց տարածքներ

Արդշինբանկ ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ հուլիսին մեկնարկեցին լոֆտ ոճի համալսարանական բաց տարածքի վերակառուցման-վերանորոգման աշխատանքները՝ գլխավոր մասնաշենքում: Համանման եւս մեկ սրահի շինարարություն սկսվեց նաև 2-րդ մասնաշենքում: Բաց տա-



րածքներն իրենց հարմարավետ միջավայրով կծառայեն ուսանողներին և դասախոսներին՝ քննարկումներ, բանավեճեր, շնորհանդեսներ կազմակերպելու, թիմաստեղծ աշխատանքներ և տարաբնույթ այլ միջոցառումներ իրականացնելու, հյուրերին ու գործընկերներին ընդունելու համար:



Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոն

Նորարարությունների մրցակցային հիմնադրամի դրամաշնորհային ծրագրերի շրջանակում մեկնարկել են Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոնի վերակառուցման-վերանորոգման աշխատանքները ՀԱԱՀ-ի Արեշի մասնաշենքում: Ստացվել է արդիական անասնաբուժական սիմուլյացիոն սարքավորումների, կադապարվածքների, գործիքների եւ կահույքի մի մասը: Կենտրոնը հագեցած կլինի նորագույն սարքավորումներով եւ կնպաստի ոլորտի մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, ոլորտի ընդհանուր կարգացման գործընթացի արդիականացմանը: Կենտրոնի ստեղծմամբ ՀԱԱՀ կրթական համակարգում կներդրվի անասնաբուժական կրթության նոր մեթոդ՝ սիմուլյացիոն ուսուցում եւ նոր մոտեցում՝ կենսաէթիկական կրթություն: Մրցունակ կադրեր պատրաստելուց վատ, կենտրոնը կրթական ծառայություններ կմատուցի գործող անասնաբույժներին եւ ֆերմերներին:





ԳԻՏՈՒԹՅՈՒՆ





2020 թ. իրականացվել է Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորմամբ ենթակառուցվածքների պահպանման ու վարգացման **12** ծրագիր, որոնք հիմնականում ներառել են ագրոպարենային ոլորտի կարելորագույն **16** գիտական ուղղություն:


Համալսարանի գիտական կառույցների եւ ստորաբաժանումների՝ ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորումը կազմել է **236,4** մլն դրամ:

Ֆինանսավորումը գիտահետազոտական ինստիտուտների, հետազոտական եւ գիտական կենտրոնների միջեւ բաշխվել է հետեւյալ համամասնությամբ (մլն դրամ)






Ֆինանսավորման բաշխվածությունն ըստ ոլորտների (մլն դրամ)




Գիտական կենտրոնների արտաբյուջետային մուտքերը (մլն դրամ)



- ▶ Գիտական կենտրոնների արտաբյուջետային մուտքերը եղել են **14,8** մլն դրամով ավելի, քան 2019 թ.-ին՝ կազմելով **56,8** մլն դրամ, որից **10,95** մլն ֆերմերների հետ համատեղ գիտահետազոտական գործունեությունից, իսկ **5,5** մլն ֆերմերային տնտեսություններին մատուցված խորհրդատվական ծառայություններից մուտքերն են:
- ▶ Իրականացվել են գիտական եւ գիտատեխնիկական գործունեության (թեմատիկ) ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված **11** գիտական թեմա, ինչպես նաեւ երիտասարդ գիտնականների հետապոտությունների աջակցման **2** ծրագիր՝ շուրջ **46,8** մլն դրամ ընդհանուր գումարով:

Գիտական հրապարակումներ



Պրոֆեսորադասախոսական անձնակազմի գիտական գործունեության խրախուսման գործընթացը

2020 թ. ընդունվել է **115** գիտական աշխատանք եւ **81** հեղինակների վճարվել է **2,867** մլն դրամ լրավճար, որը մոտ **2,4** անգամ ավելի է, քան **2019** թ. **38** շահառուին **57** հոդվածի համար վճարված **1,223** մլն դրամը:



«Տոկսվագեն» հիմնադրամի ֆինանսավորմամբ համալսարանում 2021-2023 թթ. կիրագործվի «Մեթանի ձեւավորումը սուլֆիդ եւ նիտրատ պարունակող մնացորդային

միջավայրերում» (AZ93573) դրամաշնորհային նախագիծը՝ ավելի քան 100 000 եվրո բյուջեով: Նախագծի նպատակն է հետազոտել նստվածքային միջավայրերում դիտվող մեթանառաջացնող երեւույթները, որոնց մասին դեռ քիչ բան է հայտնի: Նախագծի շրջանակում համալսարանում կստեղծվի նաեւ Բնապահպանական կենսաքիմիայի լաբորատորիա, որը կգա լրացնելու համալսարանում արդեն շարք մտած արդիական ենթակառուցների ցանկը՝ իր հերթին նպաստելով գյուղատնտեսական ու բնապահպանական գիտության եւ գործնական կրթության ու վերապատրաստման (ոչ միայն ուսանողների) նպատակների իրականացմանը: Նախագծի գլխավոր հետազոտող Նաթելլա Միրզոյանը ԱՄՆ-ում, Իսրայելում, Հայաստանում գիտական տարբեր նախագծեր է իրականացրել եւ այս նախագծի շրջանակում կհամագործակցի Բեռլինի քաղցրահամ ջրերի էկոլոգիայի եւ ջրամբարային ձկնաբուծարանների Լայբնիցի ինստիտուտի պրոֆեսոր Հ.Պ. Գրոսարտի հետ:



ՀԱԱՀ-ի «Հրանտ Պետրոսյանի անվան հողագիտության, ագրոքիմիայի եւ մելիորացիայի գիտական կենտրոն» մասնաճյուղում 2020 թ.-ի ընթացքում ՄԱԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության կազմա-

կերպության եւ Հողերի գլոբալ համագործակցություն կազմակերպության հետ կնքված պայմանագրերի շրջանակներում իրականացվել է միջազգային 2 ծրագիր՝ 1. ՀՀ հողերի ինֆորմացիոն համակարգի ստեղծման եւ ՀՀ հողային քարտեզի թվայնացման ծրագիր, 2. «Մշակել երկրորդային աղուտ-ավկալի հողերի մելիորացման նոր մեթոդներ՝ օգտագործելով տեղական թափոններ» ծրագիր-նախագիծ: Առաջինը վերաբերում է ՀՀ հողերի տեղեկատվական համակարգի ստեղծմանը եւ ՀՀ հողային քարտեզի թվայնացման ծրագրի իրականացմանը, իսկ երկրորդը՝ շրջակա միջավայրի հիմնախնդիրների համալիր լուծմանը: Երկու ծրագրերն էլ բնապահպանական տեսակետից կարեւոր նշակություն ունեն:





ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ-ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

- ▶ 124 մասնակից Շվեյցարիայի վարձացման եւ համագործակցության գործակալության ֆինանսավորմամբ իրականացվող «Անասնապահության վարձացում Հայաստանի հարավում» անասնաբույժ-փորձագետների վերապատրաստման դասընթացին:
- ▶ 16 մասնակից ՀՀ Էկոնոմիկայի նախարարության հետ համատեղ իրականացված Կորոնավիրուսի տնտեսական հետեւանքների չեզոքացման երկրորդ միջոցառման շրջանակում գյուղատնտեսական կոոպերատիվների նախագահների հավաստագրման դասընթացին:
- ▶ 175 մասնակից «Փոքր եւ միջին «խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման եւ դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակում իրականացվող դասընթացներին:
- ▶ 7 տարաբնույթ այլ դասընթացների մասնակցել է 244, հավաստագրվել՝ 182 շահառու:





▶ 4 վեբինար-քննարկում «Հայաստան-Արցախ ZOOM կամուրջ» խորագրով ԱՀ նախագահի, ԱՀ գյուղատնտեսության նախարարի, ՀԱԱՀ և ՇՏՀ ռեկտորների, ոլորտի մասնագետների մասնակցությամբ:

- ▶ 12 վեբինար «Ագրոխորհրդատվություն» խորագրով ՀԱԱՀ դասախոսական կազմի մասնակցությամբ, 70-80 մասնակից յուրաքանչյուրում:
- ▶ 22 հետապտող երկշաբաթյա վերապատրաստում է անցել Ղափաստանի ազգային ագրարային համալսարանի կազմակերպած Միջազգային ամառային դպրոց 2020-ի շրջանակում:
- ▶ 10 ուսանող մասնակցել է «Երիտասարդ մասնագետների խրախուսում՝ գյուղատնտեսական սննդի արժեքային շղթաների էլեկտրոֆիկացման և կայուն բիզնես մոդելների ստեղծման համար» 16-շաբաթյա դասընթացին:
- ▶ 20 ուսանող վերապատրաստվել է Coca Cola HBC ընկերության նախաձեռնած «Երիտասարդների պարզացում» ծրագրի շրջանակում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ





Միջազգային գիտաժողով պարենային ապահովման ոլորտում



Մոսկվայի Կ.Գ. Ռապունովսկու անվան տեխնոլոգիաների եւ կառավարման պետական համալսարանի Նախաձեռնած «Սննդային կենսատեխնոլոգիաներ» Արդյունաբերություն 4.0-ի համար կադրերի պատրաստման Նորարարական լուծումներ» խորագրով միջազգային գիտագործնական խորհրդաժողովի մասնակից 15 երկրի ներկայացուցիչների կազմում էին Նաեւ ՀԱԱՀ Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոնի դոցենտ Նարինե Հովհաննիսյանը, դասախոս Ստելլա Հովսեփյանը եւ Անաստասիան Դաշտոյանը:

Գիտաժողովի նպատակն էր բջջային տեխնոլոգիաների, գենային ինժեներիայի, Նաեւ կենդանական եւ բուսական ծագման մթերքների արտադրությունում Նոր որակական բնութագրերի, բաղադրագրերի, էներգախնայող մոտեցումների ուղիների քննարկումն ու մշակումը:



Ն. Հովհաննիսյանի վեկույցը վերաբերում էր երկրորդային հումքատեսակների կիրառման հնարավորություններին եւ հացի ոլորտի կարելիությունն խնդիրներից մեկի հնարավոր լուծման եղանակի առաջարկմանը:

Մշակված տեխնոլոգիայի շնորհիվ հնարավոր է եղել առանց բարելավիչների օգտագործման եւ խմորիչների քանակի կտրուկ կրճատման եղանակով ստանալ ավելի որակյալ եւ թեթեւ քաշով հաց, ինչպես նաեւ կրճատել արտադրական գործընթացը:

Ա. Դաշտոյանը ներկայացրել է կիսապատրաստվածքների Նոր տեխնոլոգիա եւ բաղադրագիր, որի Ներդրումը արտադրությունում կնպաստի արտադրատեսակների ընդլայնմանը, պատրաստի մթերքի որակի բարելավմանը, ինքնարժեքի նվազեցմանը: Մասին հումքի մասնակի փոխարինումը բուսական ծագման հումքով այսօր բավական արդիական է եւ ունի ռազմավարական նշանակություն:

Ս. Հովսեփյանի ներկայացրած գիտական աշխատանքը վերաբերում էր հրուշակեղենի կազմում որպես սննդային հավելում յուղատու կտավատի օգտագործման նպատակահարմարությանը: Կտավատի սերմերի կիրառումը թույլ է տալիս փոխել հրուշակեղենի ֆիզիկաքիմիական ցուցանիշները՝ դարձնելով առավել դիետիկ:

Մասշտաբային այս գիտաժողովից հետո մեր դասախոսներն ակնկալում են շահակիցների հետ հետագա համագործակցություն:



Տարածաշրջանային ագրարային բուհերի համագործակցություն՝ ԿԱՍԿԱԴ

2020 թ.-ին նշվում էր Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի ագրարային համալսարանների կոնսորցիում հանուն պարզացման (CASCADE) տարածաշրջանային կոնսորցիումի 10-ամյա հոբելյանը: Այս համատեքստում կազմակերպված հանդիպումներին և գիտաժողովին որպես ԿԱՍԿԱԴ-ի լիիրավ անդամ, ակտիվ մասնակցություն ունեցավ ՀԱԱՀ-ն:

Հուլիսի 13-ին կայացած հանդիպմանը մասնակցել են ՀԱԱՀ պրոռեկտոր Հրաչյա Ջաքոյանը, Միջազգային կապերի դեպարտամենտի պետ Գարեգին Համբարձումյանն ու Որակի գնահատման և ապահովման կենտրոնի տնօրեն Մարիամ Մովսիսյանը:

Պրոռեկտոր Ջաքոյանն իր ելույթում ներկայացրել է ՀԱԱՀ պարզացման հեռանկարները, միջազգային հարթակում համալսարանի համագործակցության ուղղություններն ու միջազգային ծրագրերը և համալսարանի պարզացման տեսլականին առնչվող ակնկալիքները: Մասնակից բոլոր բուհերը ցանկություն են հայտնել էապես խորացնել միջբուհային համագործակցությունը՝ փաստարկելով, որ այդ ուղղությամբ առկա են լիարժեք, սակայն դեռևս չօգտագործված ռեսուրսներ:

Հանդիպման մասնակիցները հատկապես շեշտադրել են հեռավար և առցանց դասընթացների մշակման և իրականացման անհրաժեշտությունը:

Կոնսորցիումի կազմակերպած «Գյուղատնտեսության կայուն պարզացումը Կենտրոնական Ասիայում և Կովկասում» թեմայով առաջին միջազգային գիտական-գործնական գիտաժողովի ավելի քան 250 մասնակիցների թվում էր նաև ՀԱԱՀ Սննդագիտության և կենսատեխնոլոգիաների ԳՀԻ-ի Բուսական ծագման մթերքի և հումքի վերամշակման տեխնոլոգիաների բաժնի վարիչ, ԲՄՎՏ ամբիոնի դասախոս, տ.գ.թ. Նարինե Հովհաննիսյանը: Ն. Հովհաննիսյանի վեկույցը վերաբերում էր մսնդի ոլորտի արդի խնդիր հանդիսացող տեղական հումքատեսակների կիրառմամբ ֆունկցիոնալ հավելումների ստացմանը և մսնդի տեխնոլոգիաներում կիրառմանը: Ուսումնասիրվել էին մի շարք հատապտուղների տարբեր սորտեր՝ ըստ կալմության, որոնցից հնարավոր կլիներ ստանալ ֆունկցիոնալ հավելումներ պահպանելով մթերքի օգտակար հատկությունները, և դրանք կիրառել ֆունկցիոնալ նշանակության հացամթերքի արտադրությունում: Հետապտուղությունների միջոցով հաջողվել է ստանալ բարձրորակ հացամթերք և կատարել նոր տեսական հիմնավորումներ:

Գիտաժողովի ընթացքում հաջողվեց կապ հաստատել ոլորտի այլ մասնագետների հետ, ինչպես նաև ձեռք բերել նորարարական մոտեցումների և տեղեկատվության զգալի բազա: Մասնակիցներն ակնկալում են նաև միջբուհական ակտիվ համագործակցություն:



IFPRI-ի Եվրասիական տարածաշրջանի 2020-ի վեկույցի քննարկումը

Պարենային քաղաքականության միջազգային հետազոտական ինստիտուտի (IFPRI) «Համաշխարհային պարենային քաղաքականության՝ Եվրասիայի վերաբերյալ 2020 թ.-ի վեկույցի» արդյունքների եւ Եվրասիական տարածաշրջանի ագրոպարենային համակարգերի վրա ՔՈՎԻԴ-19-ի ազդեցության առցանց քննարկմանը մասնակցել է ՀԱԱՀ-ի ռեկտոր Վարդան Ուռուտյանը: IFPRI-ի հետ համատեղ այն կապմակերպել էին Պարենային ապահովության եվրասիական կենտրոնը, Տաշքենդի Վեստմինստերյան միջազգային համալսարանը եւ Համաշխարհային բանկի խումբը:

Արձանագրելով համավարակի հսկայական երկարաժամկետ բացասական ազդեցությունը աղքատության, պարենային ապահովության եւ թերսնման մակարդակների վրա, հատկապես վարգաճող երկրներում՝ մասնակիցները պատրաստակամություն են հայտնել համատեղ ջանքեր

գործադրել ներառական պարենային համակարգի ստեղծման աշխատանքների արագացմանը նպաստելու ուղղությամբ եւ առաջարկել են Եվրասիական տարածաշրջանում սննդի շղթայի՝ ՔՈՎԻԴ-19-ի հարուցած խափանումների ներկա իրավիճակը հնարավորինս մեղմելու մեխանիզմներ:

Մեր երկրի եւ ամբողջ տարածաշրջանի գյուղատնտեսական քաղաքականություն իրականացնողներին ռեկտոր Ուռուտյանի հիմնական ուղերձն էր՝ ներդրում կատարել մարդկային կապիտալի, կրթության, ներառական պարենային համակարգի ստեղծման նպատակով, խթանել արտադրողների կապմակերպությունների եւ գյուղատնտեսական կոոպերատիվների կայացումը եւ, անշուշտ, թվային տեխնոլոգիաների, նորարարության վարգաճումը:



2020 թ.-ին կնքվել կամ վերահաստատվել են համագործակցության **5** հուշագրեր եւ պայմանագրեր՝ Բելառուսի պետական ագրոտեխնիկական համալսարանի, Նիկոլաեի պետական ագրարային համալսարանի (Ուկրաինա), Օմսկի պետական ագրարային համալսարանի (ՌԴ), CASCADE-ի, Մոսկվայի տեխնոլոգիայի եւ կառավարման պետական համալսարանի (ՌԴ), ՀԱԱՀ ուսանողների փորձուսուցումը ԳԴՀ-ում համակարգող LOGO ընկերության հետ:

2020 թ. Էրազմուս+ -ի շրջանակում ՀԱԱՀ-ն կնքել է **38** պայմանագիր, որոնցից **25**-ը՝ նախորդ տարվանից, իսկ **13**-ը՝ նոր: Ընդհանուր առմամբ ՀԱԱՀ-ն այս ծրագրով համագործակցում է **32** համալսարանների հետ, որն աննախադեպ թիվ է:



ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿՅԱՆՔԻ ԿԿՈՉՎԵՆ 2021Թ.-ԻՆ

- ▶ Կաթիլային ոռոգման համակարգ, հակակարկտային ցանցեր եւ 200 քառ. մ մակերեսով ջերմատուն Ակունքի Օրգանական գյուղատնտեսության փորձաօգտակարական ուսումնական կենտրոնում:



- ▶ «Գիտության հետապնդման մեթոդաբանություն եւ գիտության առեւտրայնացում» մոդուլը FAST հիմնադրամի Creative Spark ծրագրի շրջանակում:
- ▶ Կենսատեխնոլոգիաների ինկուբատորի հիմնում FAST հիմնադրամի, ԿԳՄՍ նախարարության եւ ՀԱԱՀ համագործակցության շրջանակում:



- ▶ Արդյունավետ եւ խելացի լուծումներ. ագրոդրոնների լաբորատորիա՝ DJI AGRAS T20 եւ Phantom 4rtk գյուղատնտեսական անօդաչու թռչող սարքերով:

- ▶ Կաթի եւ կաթնամթերքի տեխնոլոգիայի ուսումնափորձարարական լաբորատորիա ՀԱԱՀ Շիրակի քոլեջ-մասնաճյուղում People in Need ԲՀԿ-ի, «Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ-ի եւ ՀԱԱՀ գործակցությամբ:
- ▶ Գյուղական նորարարական գիտելիքի հանգույցի (ՀԱԲ) ստեղծում ՀԱԱՀ-ի Վանաձորի մասնաճյուղում ԵՄ-ի «EU4Youth-Սոցիալական ձեռներեցության էկոհամակարգի վարճացում՝ սահմանային գյուղերում կանաչ առաջընթացի համար» նախագծի շրջանակում, Կանաչ արահետ ՀԿ-ի հետ գործակցությամբ:
- ▶ Կաթնամթերքի վարպետաց դպրոց Բալախովիտ ՈՒՓՏ-ում՝ «Ռապամավարական վարճացման գործակալություն» ՀԿ-ի հետ գործակցությամբ:
- ▶ Երկու կարճաժամկետ դասընթացի ու հատուկ հավելվածով առցանց ագրոխորհրդատվական հարթակի ստեղծում «Ռապամավարական վարճացման գործակալություն» ՀԿ-ի հետ գործակցությամբ:

«ՏՈՒՐ ԴԸ ԱՐՑԱԽ»

2020 թ.-ը ՀԱԱՀ-ի 90-ամյա հոբելյանի տարին էր եւ պլանավորված էին տարաբնույթ միջոցառումներ, սակայն Հայաստանին պատուհասած աննախադեպ ծանր փորձությունների պատճառով հաջողվեց իրականացնել եզակիները: Դրանցից ամենանշանակալին օգոստոս ամսին համալսարանի պատկառելի պատվիրակության այցն էր Արցախի Հանրապետություն՝ «Տուր դը Արցախը»:

ՀԱԱՀ ռեկտորի ղեկավարած պատվիրակությունը խիստ հագեցած ու բովանդակալից մի քանի օրերի ընթացքում եղավ Շուշիի տեխնոլոգիական համալսարանում, ընդունելություն ունեցավ ԱՀ կրթության, գիտության եւ մշակույթի, գյուղատնտեսության նախարարություններում, քննարկվեցին համագործակցության խորացման մի շարք ուղղություններ՝ հաշվի առնելով նորարարական մոտեցումներն ու տեխնոլոգիական նորագույն ու հեռանկարային լուծումները:



«Տուր դը Արցախի» կարեւոր մաս էին կազմում այցերն ագրոբիզնեսի ընկերություններ, մասնավորապես՝ Տոդ գյուղում գտնվող Դոմեն Ավետիսյան («Կատարո») գինեգործարան: Գինեգործարանի տակառներից մեկի վրա ագրարայինցիները թողեցին «Շնորհավոր ՀԱԱՀ-ի 90-ամյակ եւ կեցցե Կատարոն» մակագրությունը: Այդ տակառը, Հայաստանի ու Արցախի բրենդ դարձած Կատարո գինին, Ավետիսյանների գողտրիկ այգիները, Արցախի գինու փառատոնի անցկացման վայր էր գինու միջազգային քարտեզի վրա հայտնված Տոդ գյուղն իր հարուստ պատմությամբ, ինչպես եւ Շուշիի տեխնոլոգիական համալսարանը, դժբախտաբար, մնացին թշնամու վերահսկողության գոտում:



Մարտահրավեր, որ ազգույի պիտի դիմակայենք

2020 թ. աշնանը պատուհասած Արցախյան երկրորդ՝ 44-օրյա պատերազմը հայ ժողովրդի պատմության աղետալի շրջադարձերից մեկն էր, որից անմասն չմնաց Ագրարային համալսարանը: Տարին կիիշվի անդառնալի, ցավալի կորուստներով: Պատերազմին մասնակցել է համալսարանի շուրջ 1600 ուսանող, որոնցից քառասուներկուսն անմահացան: Մեր հերոսներն իրենց անունը փառքով պսակեցին ռավմի դաշտում՝ անօրինակ սխրանքներ գործելով Հայրենիքի փրկության համար մղված անհավասար կռվում:




Ջուզահեռաբար, համալսարանի աշխատակիցներից կազմված կամավորների երկու խումբ է գնացել Արցախ՝ պատերազմի ընթացքում սննդամթերքի մատակարարման եւ լոգիստիկ այլ հարցերով պրաղվելու նպատակով:

ՀԱԱՀ-ի ուսանողական խորհրդի նախաձեռնությամբ հավաքված մթերքի, հագուստի, հիգիենայի պարագաների, ծխախոտի եւ դեղորայքի (ներառյալ դրամահավաքի միջոցով ձեռք բերված) մի քանի խմբաքանակ է ուղարկվել Արցախ՝ առաջնագիծ:

Մարտական մկրտություն, Մարտական խաչ ու Խաղաղության խաչ

ՀԱԱՀ

ուսանողներ Արսեն Մարգարյանը, Գագիկ Դավթյանը եւ Էմին Երիցյանը փառքով վերադարձան պատերազմից՝ կուրծքները վարդարած «Մարտական խաչ» առաջին եւ երկրորդ աստիճանի շքանշաններով:




Մարտական փառավոր ուղի անցած այս երեք երիտասարդները իսկական տղամարդու եւ հայ մարդու վեհ կերպարի կրողն են եւ իրենց մտածելակերպով ու սեփական պարտականությունների նկատմամբ վերաբերմունքով միշտ պատրաստ են վերջնական եւ արդարացի խաղաղությունը պարտադրել բավարարել ու դարավոր թշնամուն եւ այլեւս Խաղաղության խաչը կրել ուրախությամբ, թեթեւ սրտով:





ՖԻՆԱՆՍԵՐ

Ֆինանսավորման աղբյուրները





ԴՈՆՈՐՆԵՐ ԵՎ ԱԶԱԿԻՑՆԵՐ

Ագրոբիվեստի հետապոստությունների եւ կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամ

ԱՄՆ ՄԶԳ

Համաշխարհային Բանկի գրասենյակ Հայաստանում

Հայաստանում ճապոնիայի դեսպանություն

Հայաստանում Արգենտինայի դեսպանություն

Հայկական բարեգործական ընդհանուր միություն

Փառնագեան հիմնադրամ

Արդշինբանկ ՓԲԸ

Ավստրիական վարձացման գործակալություն

ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն (EU GAIA)

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (GIZ)

Ագրոբիվեստի եւ գյուղի վարձացման կենտրոն (CARD) հիմնադրամ

Հրայր եւ Աննա Հովնանյան բարեգործական հիմնադրամ

Վիկտոր Զառուգեան եւ Զուդի Սարեան

ՄԱԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության կապմակերպություն (ՊԳԿ)

Պարենի համաշխարհային ծրագիր (ՊՀԾ)

Նորարարությունների մրցակցային հիմնադրամ

Ֆոլկսվագեն հիմնադրամ

Շվեյցարիայի վարձացման եւ համագործակցության գործակալություն

**ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ**

ՍԵՐՈՒՆԴ գինիներ

2020 թ. շուկա հանվեցին մասնագիտական կույր համտեմների ժամանակ բարձր գնահատականի արժանացած ՀԱԱՀ-ի «ՍԵՐՈՒՆԴ» կարմիր անապակ եւ հնացված կարմիր անապակ գինիները, որոնք, որպես ուսանողական գինիներ, միակն են հայրենական շուկայում:

Աշխարհահռչակ «Բեքբոուն բրենդինգ» դիվայներական ընկերության հետ գործակցությամբ ստեղծված «ՍԵՐՈՒՆԴ» ապրանքանիշի պիտակի վրա պատկերված վարպետի ձեռքից աշակերտի ձեռքին փոխանցվող խաղողի ձյուղը խորհրդանշում է գիտելիքի հավերժությունը, գինեգործության վեցհապարամյա վարպետության եւ լավագույն ավանդույթների շարունակականությունը: Վայելք «ՍԵՐՈՒՆԴ» գինիները եւ միացեք ստեղծարար գինեգործների նոր սերունդներ կրթելու մեր առաքելությանը:





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ
ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**Տերյան 74,
Երևան 0009, ՀՀ
(+374 10) 52 45 41
info@anau.am**